ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Է

ԴԵՎՈՐԳ ՎԱՐԴԵՍՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը շրջադարձային իրադարձություն էր Ռուսաստանի ժողովուրդների կյանքում։ Այն ճանապարհ հարթեց և անհրաժեշտ պայմաններ ստեղծեց ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության հաստատման համար։ Ինչպես նշված է «ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, այն «սոցիալ-տնտեսական արմատական վերափոխությունների իրագործման, ազգային հարցի լուծման լենինյան ծրագիրը կյանքում կենսագործելու, սովետական հանրապետությունների ստեղծման գլխավոր քաղաքական պայմանը հանդիսացավ»[1]։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի հենց առաջին օրերին, կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հիման վրա, սովետական կառավարությունը կենսագործեց սոցիալ-տնտեսական վերափոխությունների լայն կոմպլեքս, որն ուղղված էր ռուսական կապիտալիզմի կողմից որդեգրված ազգային ճնշման հիմքերի վերացմանը։ Սովետական կառավարությունը հռչակեց Ռուսաստանի ժողովուրդների քաղաքական իրավահավասարությունը՝ նրանց տալով անջատման և ինքնուրույն պետականության ստեղծման իրավունք։ Ընդունվեցին նաև մի շարք ակտեր, որոնք դրեցին սովետական ազգային պետականության հիմքերը։ Ազգային պետականության ստեղծման հետ անհրաժեշտ էր նաև վերացնել ցարիզմից ստացած ժառանգությունը՝ ազգերի միջև գոյություն ունեցող փաստական անհավասարությունը։ Ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, «Մեր կուսակցությունը լավ էր հասկանում, որ ազգային ճնշման և անհավասարության բոլոր հետևանքները հաղթահարելու համար քիչ է նույնիսկ ամենալավ, ամենաառաջադեմ օրենքներ ընդունելը։ Հարկավոր է նաև հաղթահարել առաջներում ծնված ազգերի և ազգությունների տնտեսական և կուլտուրական հետամնացությունը»[2]։ Այդ խնդրի լուծումը դարձավ կուսակցության գլխավոր քաղաքական նպատակներից մեկը։ Այդ նպատակով դնելով սովետական հանրապետությունների պետական միավորման, դրանց ֆեդերացիայի ստեղծման հարցը, Վ. Ի. Լենինն ընդգծել է, որ այն իր սկզբունքով ու նպատակներով ֆեդերատիվ պետության նոր ձև է լինելու, որը ոչ մի առնչություն չունի և չի կարող ունենալ բուրժուական ֆեդերացիայի հետ։ «Մենք,— գրել է Վ. Ի. Լենինը 1919 թ. դեկտեմբերին,— ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, եղբայրական պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[3]։ Սովետական համընդհանուր պետականության ստեղծումը տեղի էր ունենում ազգային հարցի լուծման վերաբերյալ մեր կուսակցության և նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի դրույթներին ու ցուցումներին համապատասխան։ Այդ պրոցեսը հիմնականում ընթանում էր երկու ուղղությամբ. նախ իր՝ Ռուսաստանի ֆե-

---

1 «О подготовке к 50-летию образования СССР», М., 1972, с. 3.

2 *Լ. Ի. Բրեժնև, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիսունամյակի մասին, Երևան, 1973, էջ 16։*

3 *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 368։*

դերացիայի և ապա մյուս հանրապետությունների հետ նրա դաշնակցային կապերի ամրապնդմամբ։ Դրանք փոխադարձաբար կապված երևույթներ էին, որոնք իրենց առաջ դրել էին պրոլետարական իշխանության ամրապնդման, ժողովուրդների սոցիալիստական և ազգային զարգացման նպատակ։ Բազմազգ սովետական պետականության ստեղծման պրոցեսը հետագա զարգացում ստացավ քաղաքացիական կռիվներից հետո։ Այժմ արդեն բազմազգ սոցիալիստական պետության ստեղծման բոլոր նախադրյալներն առկա էին և մնում էր մշակել միավորման ավելի նպատակահարմար ձևեր։ Դրանք մշակելիս կուսակցությունը ելնում էր այն բանից, որ սովետական ժողովուրդներն իրար հետ կապված են պատմական խոր արմատներով։

Միասնական միութենական պետության ստեղծման գործում վճռական դեր խաղաց ՌՍՖՍՀ-ն, որը բոլոր ժողովուրդների ձգողական կենտրոնը դարձավ։ Նրա շուրջը կամավոր հիմունքներով համախմբվեցին բոլոր սովետական հանրապետությունները։ Լինելով առաջին բազմազգ սովետական պետությունը, ՌՍՖՍՀ-ն հանդիսացավ ՍՍՀՄ-ի նախատիպը։ Սովետական ժողովուրդների ավելի սերտ համախմբումն արտացոլվեց ՌՍՖՍՀ-ի և սովետական մյուս հանրապետությունների միջև կնքված պայմանագրերում, որոնցում պաշտպանվում էին ինչպես ազգային, այնպես էլ ինտերնացիոնալ շահերը, Սովետական հանրապետությունների միավորման համար շարժման ամրապնդող ուժն էին երկրի բանվոր դասակարգը և նրա մարտական ավանգարդը՝ կոմունիստների կուսակցությունը, որի բոլոր ազգային ջոկատները ղեկավարվում էին միասնական գաղափարական և կազմակերպչական սկզբունքներով, ակտիվ մասնակցություն ունենում նրա ազգային քաղաքականության կենսագործմանը։

Ուկրաինայի կոմունիստական կուսակցությունն առաջիններից մեկն էր, որ առաջարկեց ՌՍՖՍՀ-ի և Ուկրաինական ՍՍՀ-ի միջև ավելի սերտ տնտեսական կապեր ստեղծել[4]։ 1920 թ. դեկտեմբերին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննեց ՌՍՖՍՀ-ի և Ուկրաինական ՍՍՀ-ի միջև դաշնակցային պայմանագիր կնքելու հարցը[5]։ Պլենումի մշակած պայմանագրի նախագիծն ամբողջությամբ ընդունվեց այդ հանրապետությունների կառավարությունների կողմից։ 1920—1921 թթ. ՌՍՖՍՀ-ի հետ համագործակցության պայմանագրեր կնքեցին նաև Ադրբեջանական, Բելոռուսական, Վրացական, Հայկական ՍՍՀ-ները, ինչպես նաև Բուխարայի և Խորեզմի սովետական հանրապետությունները։ Այդ պայմանագրերի հիմքում ընկած էին ժողովուրդների իրավահավասարության և սուվերենության լենինյան սկզբունքները։ Դրանցում նախատեսվում էր մի շարք ժողկոմատների (ռազմածովային, արտաքին առևտրի, ֆինանսների, աշխատանքի, փոստ-հեռագրատան), ժողտնտխորհների միավորում, տնտեսական պլանների համաձայնեցում, քաղաքական և տնտեսական կյանքի մի շարք հարցերի միասնական օրենսդրության ստեղծում։ Տեղի ունեցավ նաև հանրապետությունների դիվանագիտական ջանքերի միավորում, որը միջազգային ասպարեզում զգալիորեն ամրապնդեց դրանց հեղինակությունը։ Հետևաբար, 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին սովետական հանրապետությունների միջև պայմանագրային հարաբերությունների հաստատումը նոր, կարևոր փուլ էր դրանց միավորման ճանապարհին։ Այն շատ բանով հարստացրեց սովետական բազմազգ պետության կառուցման տեսությունն ու պրակտիկան։ ՌՍՖՍՀ-ի Կենտգործկոմի և Ժողկոմսովետի գործունեության մեջ այլ հանրապետությունների մասնակցության իրավունքը և միացյալ ժողկոմիսարիատների առկայությունը նպաստեցին ընդհանուր, միութենական պետական իշխանության առաջացմանը, պետական շինարարության փորձի կու-

---

[4] «История Коммунистической партии Советского Союза», т. 4, кн. 1, М., 1970, с. 187.

[5] Центральный партийный архив института марксизма-ленинизма при ЦК КПСС (далее ЦПА при ЦК КПСС), ф. 17, оп. 2, ед. хр. 48, л. 1, 3.

տակմանը։ Սակայն դրանք անբավարար դուրս եկան նոր պայմաններում և շուտով դրսևորվեցին պայմանագրային կապերի թույլ կողմերը։ Բանն այն է, որ դրանք հարկ եղած չափով չէին ապահովում տնտեսական գործունեության միասնությունը, բոլոր ուժերի ու միջոցների միավորումը՝ տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրները լուծելու համար, չէին նախատեսում պետական իշխանության ընդհանուր ֆեդերատիվ օրենսդրական և գործադիր մարմինների ստեղծում։ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը. չնայած միավորող ընդհանուր կենտրոն էր, բայց մյուս հանրապետությունների նկատմամբ նրա իրավունքները պարզ որոշված չէին։ Չլուծված էին մնում միասնական պլանավորման հարցերը, քանի որ ՌՍՖՍՀ-ի պետպլանի որոշումներն իրավական առումով պարտադիր չէին այլ հանրապետությունների պլանային հանձնաժողովների համար։ Որոշակիություն չկար նաև ֆինանսական փոխհարաբերություններում։ Երբեմն այս կամ այն հարցի կապակցությամբ տարաձայնություններ էին առաջանում, որոնք վերացվում էին միայն կուսակցական մարմինների միջամտությունից հետո[6]։ Ինչպես տեսնում ենք, սովետական հանրապետությունների միջև գոյություն ունեցող պայմանագրային կապերը չէին կարող ապահովել անկախ հանրապետությունների համագործակցության բազմաթիվ ձևերի զարգացումը։ Այդ բոլորը միասնական բազմազգ պետության ստեղծումը կենսական անհրաժեշտություն դարձրեցին։

Սովետական բոլոր ժողովուրդների արմատական շահերը, մեր երկրում սոցիալիզմի համար մղվող պայքարի ամբողջ տրամաբանությունը պահանջում էին միասնական բազմազգ սոցիալիստական միութենական պետության կազմավորումը։ Բայց որպեսզի այդպիսի պետություն ստեղծվեր, հարկավոր էին կուսակցության կազմակերպող դերը, նրա ճիշտ քաղաքականությունն ու նպատակասլաց գործունեությունը[7]։

Միութենական պետության մեջ ազգային սովետական հանրապետությունների միավորման ճանապարհին կարևոր քայլ էր Անդրկովկասի հանրապետությունների միավորումը։ Այդ գործում ծրագրային մեծ նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ին «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» հղած նամակը, որտեղ նշված էին Կովկասի աշխատավորության կարևորագույն խնդիրները։ Այդ նամակում Վ. Ի. Լենինն առանձնապես շեշտում էր սովետական հանրապետությունների դաշինքի, ժողովուրդների եղբայրական կապերի ամրապնդման անհրաժեշտությունը։ «Ջերմագին ողջունելով Կովկասի սովետական հանրապետությունները,— գրել է Վ. Ի. Լենինը,— ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[8]։

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը միմյանց հետ եղբայրական հարաբերություններ հաստատեցին, որոնք հետագայում վերաճեցին սերտ համագործակցության՝ տնտեսական, քաղաքական ու ռազմական բնագավառներում։ Այդ կապերի բարձր արտահայտությունը հանդիսացավ Անդրֆեդերացիան։ 1922 թ. մարտի 12-ին գումարվեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական հանրապետությունների Կենտրոնական գործադիր կոմիտեների լիազոր կոնֆերանսը, որտեղ պայմանագիր կնքվեց երեք հան-

---

6 «История Коммунистической партии Советского Союза», т. 4, кн. I, с. 188.

7 Լ. Ի. Բրեժնև, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիսունամյակի մասին, էջ 7։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

ռապետությունների քաղաքական, տնտեսական ու ռազմական սերտ դաշինքի մասին։ 1922 թ. դեկտեմբերին սովետների անդրկովկասյան I համագումարի որոշմամբ անդրկովկասյան սովետական սոցիալիստական հանրապետությունների ֆեդերատիվ միությունը վերափոխվեց ֆեդերատիվ հանրապետության։ Անդրֆեդերացիայի ստեղծումն է՛լ ավելի ամրապնդեց երկրամասի ժողովուրդների բարեկամությունը և մեծ դեր խաղաց Անդրկովկասում սոցիալիստական աղգերի ձևավորման գործում։ Այն սովետական հանրապետությունների փոխհարաբերությունների նոր տիպ հանդիսացավ[9]։

Այսպիսով, 1921 թ. վերջերին և հատկապես 1922 թ. ուժեղացավ սովետական հանրապետությունների միավորման համար շարժումը։ Կոմունիստական կուսակցությունը գլխավորեց այդ շարժումը և հանդիսացավ սովետական հանրապետությունների անխախտ պետական միասնության կազմակերպիչն ու ոգեշնչողը։ Սովետական հանրապետությունների միավորման հարցը լայնորեն քննարկվեց ազգային հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների համագումարներում, սովետների գավառային, նահանգային, հանրապետական համագումարներում, բանվորների ու գյուղացիների բազմաթիվ միտինգներում ու ժողովներում։

1922 թ. դեկտեմբերի 10-ին սովետների համաուկրաինական VII համագումարը, լսելով ՍՍՀ Միության մեջ սովետական հանրապետությունների միավորման մասին Մ. Վ. Ֆրունզեի զեկուցումը, արտահայտվեց հօգուտ ՍՍՀՄ կազմավորման և լիազոր պատվիրակություն ընտրեց ՍՍՀՄ սովետների հիմնադիր համագումարի համար[10]։ *Վ. Ի. Լենինը ողջույնի հեռագիր հղեց սովետների համաուկրաինական VII համագումարին։ «Ամենակարևոր հարցերից մեկը,— ասված է հեռագրում,— որը պետք է քննարկի համագումարը, հանրապետությունների միավորման հարցն է։ Այդ հարցի ճիշտ լուծումից է կախված մեր պետական ապարատի հետագա կազմակերպումը»*[11]։ *Համագումարն իր աշխատանքի արդյունքների մասին ջերմ հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին։ «Այժմ, ինտերնացիոնալի հնչյունների ներքո,— ասված է հեռագրում,— սովետների համաուկրաինական համագումարը կառավարության զեկուցման առթիվ միաձայն ընդունեց բանաձև նոր պետական միավորման անհապաղ ստեղծման մասին... ջերմորեն ողջունելով Ձեզ, որպես մեր գաղափարական առաջնորդի, համագումարը հուսով է մոտ ապագայում տեսնել Ձեզ նաև ընդհանուր միութենական սովետական կառավարության ղեկավարի պաստում»*[12]։ *ՍՍՀՄ կազմավորման անհրաժեշտության մասին նման որոշում ընդունեց սովետների համաբելոռուսական IV համագումարը, որը տեղի ունեցավ 1922 թ. դեկտեմբերի 18-ին։*

ՍՍՀՄ կազմավորման գաղափարը լայն արձագանք գտավ նաև Անդրկովկասում։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետների բոլոր կենտրոնական, նահանգային, քաղաքային ու գավառային գործադիր կոմիտեներին ուղղված 1922 թ. նոյեմբերի 14-ի կոչում ասված է. «Իր ութամսյա գոյության ընթացքում Անդրկովկասի ֆեդերացիան ապացուցեց ոչ միայն իր կենսունակությունը, այլև իր ձգտումը էլ ավելի սերտ ու ամուր կապերի հաստատման անդրկովկասյան ժողովուրդների միջև, ինչպես նաև եղբայրական միավորման սովետական մյուս հանրապետությունների հետ»[13]։ *Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում 1922 թ. հոկտեմբեր—դեկտեմբերին տեղի ունեցան այդ հանրապետությունների կոմկուսների կենտկոմների, գավկոմների պլենումներ, ինչպես նաև կուսակցական և արհմիութենական*

---

9 «История Коммунистической партии Советского Союза», т. 4, кн. I, с. 196.

10 *Հովհ. Բաղդասարյան, Մեր հզոր Միությունը, Երևան, 1972, էջ 38։*

11 «Образование СССР. Сборник документов. 1917—1924», М.—Л., 1949, с. 291.

12 *Նույն տեղում, էջ 300։*

13 *Նույն տեղում, էջ 305։*

կազմակերպությունների, աշխատավորների ընդհանուր ժողովներ։ Նրանք բոլորը միահամուռ ողջունեցին ՍՍՀՄ-ի ստեղծման լենինյան գաղափարը և որոշումներ ընդունեցին Անդրֆեդերացիայի միջոցով իրենց հանրապետությունների ՍՍՀՄ-ի մեջ մտնելու մասին։ Բացի այդ, 1922 թ. հուլիսին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի պլենումը Գ. Կ. Օրջոնիկիձեին և Անդրերկրկոմի ղեկավար այլ աշխատողների հանձնարարել էր հարց հարուցել ՌԿ(բ)Կ Կենտկոմի առջև՝ ճշգրտելու անդրկովկասյան հանրապետությունների և ՌՍՖՍՀ-ի միջև ֆեդերատիվ փոխհարաբերությունների խնդիրը[14]։ 1922 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվում բացվեց սովետների անդրկովկասյան I համագումարը, որը որոշում ընդունեց ՍՍՀՄ-ի մեջ Անդրֆեդերացիայի մտնելու մասին։

Աշխատավորների շրջանում կուսակցության կատարած աշխատանքը և ազգային շինարարության փորձը, որը սովետական իշխանության առաջին տարիներին կուտակել էին ՌՍՖՍՀ-ն, Ուկրաինան, Բելոռուսիան, Անդրֆեդերացիան և ինքնավար հանրապետությունները, միավորիչ շարժման հզոր ալիքը հարթում էին միասնական սոցիալիստական պետության ստեղծման ուղին։ Այսպիսով, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ 1922 թ. սովետական հանրապետությունները ընդհուպ մոտեցան սովետական բազմազգ դաշնակցային պետության ստեղծմանը։

ՍՍՀՄ կազմավորման հարցը 1922 թ. գարնանից քննարկվում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմում։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1922 թ. մայիսի 11-ի նիստում, որին մասնակցում էր Վ. Ի. Լենինը, քննարկվեց ՌՍՖՍՀ-ի և Ուկրաինական ՍՍՀ-ի փոխհարաբերության հարցերը։ Քաղբյուրոն Մ. Վ. Ֆրունզեի նախագահությամբ ստեղծեց հանձնաժողով, որը պետք է մշակեր այդ երկու եղբայրական հանրապետությունների պետական միավորման ձևերի կատարելագործման հարցը։ Քաղբյուրոյի 1922 թ. օգոստոսին տեղի ունեցած նիստում ՌԿ(բ)Կ Կենտկոմի և հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչներից (Վ. Ի. Ստալինի նախագահությամբ) ստեղծվեց մի նոր հանձնաժողով, որը պետք է նախապատրաստեր միասնական միութենական պետության մեջ սովետական հանրապետությունների միավորման հարցը, գտներ միավորման այնպիսի ձև, որը համապատասխաներ սովետական ժողովուրդների ընդհանուր շահերին ու ապահովեր նաև յուրաքանչյուր ժողովրդի ազգային զարգացումը։ Սակայն այդ ձևը միանգամից չգտնվեց։ Հանդես եկան տարբեր միտումներ։ ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ սովետական հանրապետությունների ինքնավար իրավունքով մտնելու մասին վերոհիշյալ հանձնաժողովի նախագծում սովետական հանրապետությունների միավորման ձևի հարցում առկա էին մի շարք սխալներ։ Այսպես, այդ նախագծով առաջարկվում էր Ուկրաինան, Բելոռուսիան, Ազրբեջանը, Հայաստանը և Վրաստանը ընդգրկել ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ, որպես ինքնավար հանրապետություններ։ Նախագիծը նախատեսում էր ՌՍՖՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինների իրավասությունը տարածել նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրֆեդերացիայի համապատասխան հիմնարկությունների ու կազմակերպությունների վրա։ Այլ կերպ ասած, հանրապետությունների միավորումը պետք է տեղի ունենար ՌՍՖՍՀ-ի շրջանակներում՝ ինքնավար սկզբունքով։ Այդ նախագիծը պաշտպանություն էր գտել կուսակցության և սովետական մի շարք պատասխանատու աշխատողների շրջանում. նման եզրակացության հանգելու հիմք հանդիսացան ՌՍՖՍՀ-ի կազմում ազգերի փոխհարաբերությունների կարգավորումը և ժողովուրդների միջև բա-

---

14 «История национально-государственного строительства в СССР», т. I, М., 1968, с. 357.

ռեկամական հարաբերությունների ստեղծումը։ Ավելին, «ինքնավարացման» կողմնակիցները գտնում էին, թե իբր միավորման այդ սկզբունքից հրաժարվելը կթուլացնի սովետական հանրապետությունների միասնությունը։ Սակայն նրանք հաշվի չէին առել եղբայրական հանրապետությունների սուվերենության իրավունքի անհրաժեշտությունը, անտեղի մտավախում էին, որ հանրապետությունների ինքնուրույնության, սուվերենության ընդգծումը իբր կքայքայի պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիմքերը, տեղիք կտա ժողովուրդների բարեկամության գաղափարի վրա տեղական նացիոնալիստների նոր գրոհի և որ այդ բոլորը կնպաստեն մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դրսևորմանը։ «Ինքնավարացման» գաղափարը սխալ էր. ընդունել այդ տեսակետը, կնշանակեր մի քայլ ետ նահանջել ազգային պետական շինարարության գործում և բացահայտորեն թերագնահատել ազգային հարցի նշանակությունը։ «Ինքնավարացումը» կհանգեցներ մեծապետական շովինիզմի ոչ թե վերացմանը, այլ՝ ուժեղացմանը։ Այդ նախագծի գնահատման հարցում հանրապետությունների կոմունիստական կուսակցությունները տարբեր կարծիքներ դրսևորեցին։ Այսպես, այդ նախագիծը պաշտպանեցին Ադրբեջանի, Հայաստանի կոմկուսների կենտկոմները և Անդրերկրկոմը, բացառությամբ Վրաստանի Կենտկոմի[15]։ Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմը կողմնակից էր միավորման պայմանագրային ձևին, իսկ Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմը կոնկրետ որոշում չընդունեց միավորման ուղիների մասին։ Ավելին, Ուկրաինայում կային մարդիկ, որոնք, պաշտպանելով «ինքնավարացման» գաղափարը, հանդես եկան ֆեդերատիվ միություն կազմակերպելու դեմ՝ առաջարկելով սովետական հանրապետությունները միավորել կոնֆեդերացիայի սկզբունքով, այսինքն՝ ստեղծել այնպիսի միավորում, որտեղ չէր լինի ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր պլան, միասնական միութենական բյուջե, միասնական միութենական քաղաքականություն և այլն[16]։ Սեպերատիվ միտումներ դրսևորեցին նաև թաթարական և բաշկիրական նացիոնալ-ուկլոնիստները, որոնք առաջարկում էին ՌՍՖՍՀ-ը վերացնել, իսկ նրա մեջ մտած հանրապետությունները դարձնել միութենական հանրապետություններ և ապա դրանցից ստեղծել միասնական սոցիալիստական պետություն[17]։

«Ինքնավարացման» նախագիծը քննարկվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի ստեղծած հանձնաժողովի 1922 թ. սեպտեմբերի 23-ի և 24-ի նիստերում, որտեղ այն ընդունվեց որպես հիմք։ Հաջորդ օրը այդ նիստերի արձանագրությունները և Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի կոմունիստական կուսակցությունների ընդունած բանաձևերն ուղարկվեցին Վ. Ի. Լենինին, որը վատառողջության պատճառով չէր մասնակցել հանձնաժողովի նիստերին։ Այդ նախագծի հետ ծանոթացել էին նաև կուսակցության Կենտկոմի անդամներն ու թեկնածուները։

1922 թ. դեկտեմբերի 30-ին և 31-ին Վ. Ի. Լենինը թելադրեց «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը, որտեղ կուսակցությանը նախազգուշացնում էր ՍՍՀՄ-ի կազմավորման գաղափարի մեծապետական-նացիոնալիստական խեղաթյուրման վտանգից և ընդգծում կուսակցության ազգային ծրագրի հիմքում ընկած սկզբունքների խստիվ պահպանման անհրաժեշտությունը։ ՍՍՀՄ-ի կազմավորման հարցի շուրջը Վ. Ի. Լենինը զրուցեց նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամների հետ և կոնկրետ առաջարկություններ արեց ՍՍՀՄ-ի ընդհանուր միութենական

---

15 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսի վրացական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 13, գ. 182, թ. 340։

16 «История Коммунистической партии Советского Союза», т. 4, кн. I, с. 199.

17 Նույն տեղում։

կազմակերպությունների և հիմնարկությունների ստեղծման վերաբերյալ։ Ավելին, դեռ 1922 թ. սեպտեմբերի 26-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին հղած նամակում նա առաջարկում էր ստեղծել անկախ հանրապետությունների միավորման սկզբունքորեն այլ ձև։ Վ. Ի. Լենինը սովետական հանրապետությունների պետական միավորման ճիշտ ձևը համարում էր ազգային հանրապետությունների լիակատար սուվերենության և իրավահավասարության հիման վրա ստեղծված պետական միությունը։ Նա նշում էր, որ հանրապետությունները պետք է միավորվեն ոչ թե ՌՍՖՍՀ-ի կազմում, այլ պետական նոր կազմավորման՝ ՍՍՀՄ-ի մեջ, որտեղ ՌՍՖՍՀ-ն կմտնի բոլոր անկախ հանրապետությունների հետ հավասար իրավունքով։ «Մենք,— գրել է Վ. Ի. Լենինը,— մեզ իրավահավասար ենք ճանաչում Ուկրաինական ՍՍՀ-ի ու մյուսների հետ և նրանց հետ մեկտեղ ու նրանց հետ հավասարապես մտնում ենք նոր միության, նոր ֆեդերացիայի մեջ»[18]։ Նա առաջարկում էր հանրապետական մարմինները մեխանիկորեն ՌՍՖՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն մարմիններին ենթարկելու փոխարեն ստեղծել համընդհանուր ֆեդերատիվ մարմին՝ համամիութենական Կենտգործկոմ։ «Կարևոր է,— նշել է Վ. Ի. Լենինը,— որպեսզի մենք սնունդ չտանք «անկախականներին», չոչնչացնենք նրանց անկախությունը, այլ ստեղծենք նոր փուլ՝ իրավահավասար հանրապետությունների ֆեդերացիա»[19]։ Զարգացնելով այդ միտքը, Վ. Ի. Լենինը գրել է. «Հարկավոր է բացարձակորեն պահանջել, որպեսզի միութենական Կենտգործկոմում նախագահեն հերթով ռուս, ուկրաինացի, վրացի և այլն։ Բացարձակորե՛ն»[20]։ Այսպիսով, Վ. Ի. Լենինը և ՌԿ(բ)Կ Կենտկոմը դատապարտեցին ու մերժեցին «ինքնավարացման» գաղափարը։ Վ. Ի. Լենինի առաջարկությունների հիման վրա կուսակցության Կենտկոմի հանձնաժողովը կազմեց նոր նախագիծ, որն ընդունվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1922 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած պլենումում։ Պլենումն անհրաժեշտ գտավ Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրֆեդերացիայի և ՌՍՖՍՀ-ի միջև կնքել ՍՍՀՄ-ի կազմի մեջ միավորվելու պայմանագիր։ Ստեղծվեց հանձնաժողով, որին հանձնարարվեց պատրաստել անհրաժեշտ նյութեր՝ դաշնակցային պայմանագրի ձևակերպման համար[21]։ Կուսակցության Կենտկոմի պլենումի որոշումը հավանություն տվեցին Ուկրաինայի, Բելոռուսիայի, Վրաստանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների պլենումները, որոնք տեղի ունեցան 1922 թ. հոկտեմբեր—դեկտեմբերին։ Այդ որոշումներից հետո ամբողջ երկրում համաժողովրդական հուժկու շարժում սկսվեց միավորման օգտին։

1922 թ. նոյեմբերի 11-ին տեղի ունեցավ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների II կոնֆերանսը, որն իր ընդունած բանաձևում լիովին պաշտպանեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի որոշումը և անհրաժեշտ գտավ, որպեսզի անդրկովկասյան հանրապետությունները ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնեն Անդրֆեդերացիայի միջոցով։ 1922 թ. դեկտեմբերի 18-ին տեղի ունեցավ կուսակցության Կենտկոմի հերթական պլենումը, որը վերջնականապես հաստատեց ՍՍՀՄ կազմավորման նախագիծը։ Համառուսաստանյան սովետների 1922 թ. դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած X համագումարը միահամուռ հավանություն տվեց ազգային հանրապետությունների նախաձեռնությանը։ 1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում տեղի ունեցավ համամիութենական սովետների I համագումարը, որը հռչակեց ՍՍՀՄ կազմավորումը և ընդունեց օրենսդրական ակտեր՝ դեկլարացիա և պայմանագիր։ Այդպես ծնվեց աշխարհում առաջին բազմազգ սոցիալիստական պետությու-

---

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 853։

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 853։

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 439։

21 ЦПА при ЦК КПСС, ф. 17, оп. 2, ед. хр. 84, л. 1, 3.

նը, որը Վ. Ի. Լենինը դեռևս 1919 թ. հունիսին անվանել էր Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն[22]։

ՍՍՀՄ կազմավորումը մեր երկրի բանվոր դասակարգի և նրա կուսակցության ստեղծագործության մեծագույն արգասիքն է։ «ՍՍՀՄ կազմավորումը,— ընդգծել է ՍՄԿԿ Կենտկոմը,— հանդիսացավ կուսակցության տեսական և քաղաքական աշխատանքների, սովետական ժողովուրդների բազմակողմանի փորձի արդյունքը և արտահայտեց նրանց սպասելիքները»[23]։

ՍՍՀՄ կազմավորման ուղղությամբ կատարված կազմակերպական և քաղաքական աշխատանքներն ամփոփվեցին 1924 թ. հունվարին տեղի ունեցած համամիութենական սովետների II համագումարում՝ ՍՍՀՄ սահմանադրության ընդունմամբ, որն օրենսդրական կարգով օրինականացրեց իրավահավասար ժողովուրդների կամավոր միավորումը, նրանց իրավահավասարությունը։ ՍՍՀՄ կազմավորումը կարևոր նշանակություն ունեցավ։ ՍՍՀՄ-ը մարմնավորեց սովետական բոլոր ժողովուրդների սոցիալ-տնտեսական և պետական շահերը։ Ինչպես նշված է ՍՍՀՄ կազմավորման մասին դեկլարացիայում, «Սովետական կառավարության ուրույն կառուցվածքն իր դասակարգային բնույթով սովետական հանրապետությունների աշխատավորական մասսաներին մղում է դեպի մեկ սոցիալիստական ընտանիքի միավորման ուղին»[24]։ *ՍՍՀՄ կազմավորմամբ կոմունիստական կուսակցությունը հաջողությամբ լուծեց Վ. Ի. Լենինի առաջադրած այն խնդիրը, որ անհրաժեշտ է «ամրապնդել և ավելի զարգացնել սովետների ֆեդերատիվ հանրապետությունը, որպես դեմոկրատիայի անչափ ավելի բարձր և առաջադիմական ձև...»*[25]։

Կոմունիստական կուսակցության ղեկավարության պայմաններում պրոլետարիատի դիկտատուրայի բազայի վրա ստեղծված ՍՍՀՄ-ը յուրաքանչյուր ժողովրդի սուվերենությունն ու պետական շահերը ներդաշնակորեն զուգակցեց միասնական կենտրոնացված բազմազգ պետության սուվերենության և շահերի հետ։

Աշխարհի առաջադեմ մարդկությունը ողջունեց ՍՍՀՄ կազմավորումը՝ որպես ժողովուրդների միջև փոխհարաբերության նոր սկզբունքների մարմնավորում։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց բազմազգ պետություն, որը կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության մեծագույն հաղթանակներից է և ազգային հարցի լենինյան գաղափարների կենդանի մարմնավորումը։ Այսպիսով, ՍՍՀՄ կազմավորումը խորապես ինտերնացիոնալիստական լենինյան կուսակցության մեծագույն ծառայությունն է։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ՍՍՀ Միության մեջ համախմբված ժողովուրդների հեղափոխական-վերակերտիչ գործունեության արգասիքը եղավ զարգացած սոցիալիստական հասարակության կառուցումը, որի պայմաններում ևս անշեղորեն աճում է ՍՄԿԿ-ի ղեկավար, ուղղություն տվող և կազմակերպող դերը՝ ՍՍՀՄ-ի ազգերի և ազգությունների զարգացման, նրանց եղբայրական դաշինքի ամրապնդման գործում։ «Պատմությունը չգիտի այնպիսի պետություն,— ասված է ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ Կենտկոմի ընդունած որոշման մեջ,— որը շատ կարճ ժամկետներում այնքան շատ բան արած լինի ազգերի և ազգությունների համակողմանի զարգացման համար, որպիսին է ՍՍՀՄ-ը՝ մեր բոլոր ժողովուրդների սոցիալիստական հայրենիքը»[26]։

---

22 В. И. Ленин, ПСС, т. 39, с. 22.

23 «О подготовке к 50-летию образования СССР», с. 10.

24 «Съезды советов СССР в постановлениях и резолюциях», М., 1939, с. 19.

25 *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 71։*

26 *«Սովետական Հայաստան», 21. II. 1982։*

КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ—ОРГАНИЗАТОР СССР

ГЕВОРГ ВАРДГЕСЯН

Резюме

Советский Союз олицетворяет небывалые ранее в истории отношения единства и дружбы свободных народов. Такое государство родилось в результате победы Великой Октябрьской социалистической революции под руководством Коммунистической партии. Оно исторически подготавливалось закономерным ходом развития классовой борьбы российского пролетариата, поистине титанической деятельностью В. И. Ленина и Коммунистической партии в течение десятилетий.

После Октябрьской революции произошел глубочайший переворот в национальных отношениях, они впервые в истории стали строиться на основе интернационального принципа равенства всех наций, народностей и рас. В образовании СССР нашли практическое воплощение основные принципы национальной программы Коммунистической партии.